



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

373

1901-1920 № 49

535-

Տեղեւոր է. ցարդաւոր
Նաչգ. ՏԻՊՆԵ-պրեսնոցի

1902

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ - ՈՐԲԱՆՈՑ
Ի ԿԻՊՐՈՍ

ՏԵՂԵՎԱԳԻՐ

Ե. ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

(1901 ՄԱՐՏ 1 — 1902 ՓԵՏՐՈՒԱՐ 28)



ՆԻԿՈՍԻԱ, 1902

ՏՊԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ - ՈՐԲԱՆՈՑԻ



ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ - ՈՐԲԱՆՈՑ
Ի ԿԻՊՐՈՍ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ե. ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

(1901 ՄԱՐՏ 1 — 1902 ՓԵՏՐՈՒԱՐ 28)



ՆԻԿՈՍԻԱ, 1902

ՏՊԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ - ՈՐԲԱՆՈՑԻ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գոհութեամբ սրտի ահա Հաստատութեանս Հինգերորդ տարեշրջանի Տեղեկագիրը կը ներկայացնեմք մեր պատուական նուիրատուաց և բարեկամաց :

Անոնք որ կրթարան—Որբանոցիս գոյութեամբ և կացութեամբ հետաքրքրուած և մեր նախորդ չորս Տեղեկագիրները կարդալու առիթ ունեցած են՝ ներկայ գրքոյկը աչքէ անցընելէ յետոյ մեզ հետ անշուշտ պիտի ուրախակցին սա իրողութեան յլրայ թէ, այս ձեռնարկ, իր համեստ ծրագրովն ու սահմանափակ ելեմուտքովն իսկ՝ յառատ և կանոնաւորութեամբ ընթացած է, և մինչև հիմա քսանէ աւելի պատանիներու լուրջ նախակրթութիւն մը աւանդելով և տեղացի հայ և օտար հասարակութեանց առջև պատուաբեր դիրք մը գրաւելով արժանացած է ընդհանուր ազգայնոց ուշադրութեան և համակրութեան :


Ո՛վ որ նմանօրինակ հաստատութեանց և առհասարակ հանրային ձեռնարկութեանց փոքր ի շատէ մօտէն ծանօթութիւն ունեցած է՝ քաջ գիտէ թէ ինչ տեսակ դժուարութիւններ կրնան բարձրանալ անոնց բարւոք յլարչութեան և մատակարարութեան դէմ, և հետևաբար չը կրնար առանց բաւականութեան դիտել հաստատութեանս ընթացքը :

Մեր Պատ. Տնօրէն խորհրդոյն Տեղեկագիրները, և պաշ-

կան և անհատական հանգամանք ունեցող ուրիշ վկայ-
 ութիւններ՝ ցոյց կուտան թէ կիւրոսի կրթարան—Որբանոցին
 մէջ ցայսօր տիրած են անընդհատ աչալըջութիւն և անկեղծ
 հոգածութիւն, որոնք պատիւ պիտի բերէին ո'ւ է հանրային
 գործի մը: Ասոնց՝ իբրեւ շօշափելի ապացոյցներ կրնանք յի-
 շել որ մեր սաներուն ստացած հմտութիւնն,—համեմատելով
 ընթացքին տևողութեան՝ — ընդհանրապէս գոհացուցիչ է,
 անոնց վարքութեամբը՝ միշտ դրուատելի կը մնայ, իսկ առող-
 ջական վիճակը, որ նիւթական ու բարոյական խնամոց փոր-
 ձանշանը կրնայ համարուիլ՝ ոչ՝ երբէք մտահոգութիւն
 պատճառած է: Յաւալի է որ, Որբանոցիս համար առաջին
 անգամ ըլլալով Տնօրէն խորհուրդը պարտաւորուած էր ար-
 տաքսել երեք որբ աշակերտներ: Յուսանք և մաղթինք որ
 այդպիսի անարժան պատասպարելոց օրինակներ հազուադէպ
 լինին: Այս առթիւ պէտք կ'զգանք խնդրել այն յարգելի
 ազգայիններէն որք առիթ կունենան որբեր յանձնարարելու
 մեզ՝ որ չ'մոռնան քննել և ստուգել թէ ընտրուածներն իսկա-
 պէս անտէրունչ որբ և երկու ծնողներէ որբացեալ տղայք
 լինին, և միանգամայն իմացական, բարոյական և ֆիզիքական
 յատկութեամբ համապատասխան Որբանոցիս կանոնագրոյն
 պահանջմանց:

Գալով Հաստատութեանս դրամական վիճակին՝ արդոյ
 ընթերցողք մեր Ընդհանուր Հաշուեկշռին մէջ պիտի տեսնեն
 որ կարողացած ենք, ազնուասիրտ նուիրատուաց շնորհիւ,
 անցեալ տարւոյ պէտքերը հոգալէ, և Տպարանի համար ալ
 իբր 52 Անգլ. ոսկի դրամագլուխ մը յատկացնելէ յետոյ՝ 150
 Անգլ. ոսկի ևս աւելցնել մեր պահեստի գումարին վրայ, որ
 այժմ հասած է 500 Անգլ. ոսկւոյ: Բայց և այնպէս տակաւին

257-2013
 28394-ԱԶ



շատ հեռի կը գտնուինք առաջադրեալ նշանակէտէն, այսինքն 5000 Անգլ. ոսկւոյ դրամագլխի գումարէն:

Թերևս աւելորդ չը համարուի կրկնել մի անգամ ևս թէ մենք 'ի սկզբանէ անտի «մեր մտաց մէջ ունէինք հաստատութեանս հեռաւոր ապագան, իբրև մնայուն կրթարան Հայ մանկտւոյն»: Եւ այն նկատումները որոնք շատ տարիներ առաջ յղացում տուած էին այս գաղափարին, և որոնցմով հինգ տարիէ ի վեր ձեռնարկուած է գործին՝ դեռ կան ու կը մնան, և առաւել քան երբէք պարտք կը դնեն ամեն մտածող հայու վրայ որ հաստատութեանս տեսականութիւնն ապահովելու ամեն ջանք փութով 'ի գործ դրուի, այնպէս որ հնարաւոր լինի հետզհետէ ընդարձակել և բարձրացնել զայն և վերջապէս անոր տալ այնպիսի մի ուղղութիւն՝ որով կարևոր բաժին մը ունենայ ազգային լուսաւորութեան գործին մէջ:

Արդ, մեր համօրէն ազգայնոց ուշադրութիւնը վերստին կը հրաւիրենք այս մարդասիրական և կրթական յարկին վրայ, այն քաղցր վստահութեամբ թէ մեր ներկայ կոչը արձագանք պիտի գտնէ ազնիւ սրտերու մէջ: Անոնք որ նիւթական միջոցներ ունին և կը բաղձան առաքինական մեծագործութեամբ ծառայել Աստուծոյ և ազգին, և միանգամայն յաւէրժացնել իրենց յիշատակը՝ մի պահիկ թող դարձնեն իրենց ուշքը դէպի կիպրոս կղզին, և խորհրդածեն թէ այդ խաղաղիկ հողին վրայ հաստատուած կրթարանն որ պիտի բեղմնաւոր ապագայ կը խոստանայ, եթէ մի անգամ օժտուի անհրաժեշտ պայմաններով: Եւ մինչ մէկ կողմէ ակնկառոյց կ'սպասենք մի Բարերար Պաշտպանի երևումը ողջունելու՝ միւս կողմէ կը խնդրենք ազգային զարգացման նախանձախնդիր ամեն անհատներէ ալ որ իրենց գտնուած կեդրոններու մէջ մղում տան

Հաւաքական գործունէութեանց, և Օժանդակ. Մասնաժողով
կամ առժամանակեայ Մարմին կազմելով ձեռնտու լինին մեզ
որպէս զի գէթ անլտանգ յառաջանանք արդի շաւղին վրայ:

Արդարև, քաջալերական երևոյթ է այն ազնիւ աջակցու-
թիւնն զոր վայելեցինք ցարդ: Տաճկաստանէ դուրս շատ մը
կեդրոններէ նպաստներ հասան, առաւել կամ նուազ: Գլխա-
ւորապէս՝ Անգլիայէն, Ֆրանսայէն, Եգիպտոսէն, Ամերիկայէն,
Ռուսաստանէն, մինչև իսկ Պարսկաստանէն մեր սիրելի ազ-
գակցաց համակրութեան գործնական ապացոյցներն անպա-
կաս եղան և զմեզ ոգեւորեցին համբերութեամբ տանելու այս
ծանր բեռը: Այսուամենայնիւ, որպէս զի մտադրեալ ծրագրով
Կրթարանի մը աստիճանը ձեռք բերուի՝ յոյժ ցանկալի է որ ա-
ւելի ընդարձակուի մեր գործակցաց շրջանակը: Ահա այս կէ-
տի վրայ լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրենք ամեն անոնց որք
ըստ արժանւոյն կը գնահատեն ազգային դաստիարակութիւնը:

Յառաջաբանս փակելէ առաջ ամենաքաղցր սլարտակա-
նութիւն կը կատարենք հրասլարակաւ մատուցանելով մեր
երախտագիտական զգացումներն առ ամենայն բարերարս և
բարեկամս որք ո՛նէ եղանակաւ նպաստեցին և կը նպաստեն
Որբանոցիս: Մասնաւորապէս՝ անհուն շնորհակալութիւն առ
Պատ. Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութիւնն, առ Ազ-
նուափայլ Տիկին Երանուհի Թ. Յակոբեան, և առ Մեծ. Իշ-
խան Գ. Լուսինեան՝ ՚ի Բարիզ, առ Վերասլատ. Հարս Մխի-
թարեան Միարանութեան վենետիոյ, առ Վսեմ. Տիգրան
փաշա Ապրօ և առ Մեծ. Պետրոս էֆ. Եարապետեան՝ ՚ի Գահի-
րէ, և առ ամենայն յարգելի ազգայինս որք այլ և այլ նուէր-
ներով—զրքերով, թերթերով, ուտեստներով, ևն. ուրախացու-
ցին մեր սաները: Նոյնպէս շնորհակալութիւն առ Պատուար-

Ժան Խմբագիրս և թղթակիցս ազգային լրագրաց, որք հանեցան խրատուսիչ տողեր նուիրելու յօգուտ հաստատութեանս:

Այլ և կը մատուցանենք ամենաջերմ շնորհակալութիւն մեր պատուական գործակցաց, — Փարիզու և Լոնտոնի Օժանդակ Մասնատողութեան, ինչպէս և Կիպրոսի Տնօրէն Խորհրդոյ անդամոց — որք անցեալ տարեշրջանի միջոցին ալ համերաշխութեամբ և անձնուիրութեամբ կատարեցին իրենց պաշտօնը, զոր անտարակոյս կը նկատեն ազգային և մարդկային նուիրական պարտականութիւն մը:

Հարկադրուած ենք այս տեղ յիշելու որ Փարիզու Օժանդակ Մասնատողութեան իր շրջանը լրացած համարելով հրատարած է վերջերս, պաշտօնը թողլով նոր Մասնատողութի մը որ կազմուելու լրաց է տեղւոյն Արժ. Հոգեւոր հովուին նախաձեռնութեամբ: Չէ կարելի մտնալ այն անգին ծառայութիւնն զոր Որբանոցիս մատուցին ցայժմ Փարիզու Մասնատողութեան Մեծարգոյ անդամք, հզօրապէս աջակցելով մեզ: Մեր սրտագին զգացումներն մի անգամ ևս յայտնելով կը սիրենք յուսալ թէ յիշեալ յարգելի Տեարք չպիտի դադրեցնեն այն համակրալից հոգածութիւնը զոր այնչափ ջանիւք ցոյց տուին իրենց պաշտօնավարութեան միջոցին: Սիրելի է մեզ յուսալ, նաև, որ յառաջիկային բազմ պիտի ունենանք վայելելու Փարիզու նորակազմ Մասնատողութեան, ինչպէս և բոլոր ազգայնոց թանկագին օժանդակութիւնը, որմէ միայն կախեալ է կրթարան—Որբանոցիս յաջող և բարգաւաճ ապագայն:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԿՐԹԱՐԱՆ — ՈՐԲԱՆՈՑԻՆ
ՈՐ Ի ԿԻՊՐՈՍ:

Մանչեսթըր, 16 Մարտ, 1902:

ԱԶԳԱՅ ԻՆ ԿՐԹԱՐԱՆ - ՈՐԲԱՆՈՑ

Ի ԿԻՊՐՈՍ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

- Նախագահ, Արժ. Տ. Թորոս քահանայ Իսահակեան
Վ. Ա., հոգեւոր հովիւ Հայոց 'ի Մանչեսթրը :
- Առեւնապետ, Մեծ. Տիար Ա. Մ. Ժամկոչեան,
A. M. Jamgochian Esq., Manchester.
- Գանձապահ, Մեծ. Տիար Սարգիս Եղիազարեան,
S. Eliazarian Esq., Manchester.
- Պատոշակիւ Քարտոշար, Մեծ. Տիար Յովհաննէս Ան-
դրէասեան, Հաշտարար դատաւոր,
O. Andreasian Esq., J. P., Manchester.

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ի ՆԻԿՈՍԻԱ (ԿԻՊՐՈՍ)

- Նախագահ, Արժ. Տ. Պետրոս Վարդապետ Սարաճեան,
Առաջնորդ Կիպրոսի :
- Առեւնապետ, Մեծ. Տիար Աբիսողոմ Խլթիւճեան, Առա-
ջին Թարգման Կառավարութեան :
- Առեւնադպիր, Մեծ. Տիար Յարութիւն Մելիքեան :
- Գանձապահ, " " Աբղար Կիւլէզեան :
- Տեսուչ, " " Վահան Քիւրքճեան :


Տնօրէն Խորհրդին Հասցէն է՝ Direction de l'Orphe-
linat Arménien, Nicosia (Chypre).

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ Ի ԼՈՆՏՈՆ

*Ատենապետ, Մեծ. Տիար Ներսէս Ներսէսեան, Դեր-
Հիւպատոս Պարսկաստանի,*

N. Nersessian Esq., 48 Doughty Street
Mecklenburgh Square, London, W. C.

*Գաւեճապահ և Քարտոռչար, Մեծ. Տիար Ա. Կիւլպէնկեան,
A. Gulbenkian Esq., 2 Holland Park
Avenue, London, W.*



ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ Ի ՓԱՐԻՉ

*Նախագահ, Արժ. Տէր Վառճապուհ Քահանայ Քիւլար-
եան :*


*Ատենապետ, Մեծ. Տիար Յովսէփ Իսկէնտէր,
Monsieur J. Iskender, 36 rue de la
Tour-d'Auvergne, Paris.*

*Գաւեճապահ, Մեծ. Տիար Կարապետ Բէհլիվանեան,
Monsieur G. Péhliivanian, 13 rue
Chateaudun, Paris.*

Դեր - Ատենապետ, Մեծ. Տիար Յ. Միքայէլեան :

Ատենադպիր, Մեծ. Տօբթօր Ալբրեան :

Մեծ. Տիգրան Խան Քէլէկեան :



ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

Արժ. Նախագահ և Մեծ. Անդամք Խնամակալոչքեան
Ազգ. Կրթարան — Որբանոցիև Կիպրոսի
ի Մանչեսթրը :

Տեարք,

Պատիւ ունինք Ձեր նկատողութեան ներկայացնելու
Հաստատութեանս Հինգերորդ Տեղեկագիրը, որ կ'ամփոփէ
1901 Մարտ 1 էն մինչև 1902 Փետրուար 28 տեւող տա-
րեշրջանը :

ՈՒՍԱՆՈՂՔ

Հաստատութեանս այս Հինգերորդ տարեշրջանի մէջ
դասախօսութիւնները շարունակուեցան կանոնաւորապէս,
և մեր սաներն ընդհանրապէս զգալի քայլեր առին Մրա-
գրով որոշուած ուսումներուն մէջ : Մասնաւորապէս Չոր-
րորդ դասարանի աշակերտները, որոնք յառաջիկայ ամառ-
նային արձակուրդին իրենց ընթացքը սխալ լրացնեն՝ սլա-
տեհութիւն ունեցան հետեւելու Բարձրագոյն Նախակրթարա-
նի յատուկ դասընթացքի մը, եւ զբաղեցան հետեւալ ա-
ռարկաներով, —

Հայերէն . — Աշխարհաբար՝ հատընտիր ընթերցուածք եւ շարադրութիւն : Գրաբար՝ Քերականութիւն, Աւետարանի եւ Եղիշէի թարգմանութիւնք հանդերձ վերլուծութեամբ :

Թոշրքերէն . — Ուղղադրութիւն եւ վարժութիւն զանազան գրութեանց, Կիւրտեարեէն եւ Թարիխի Օսմանիէն :

Անգլիերէն . — Քերականութիւն, խօսակցութիւն, թարգմանութիւն անգլիերէնէ հայերէն եւ հայերէնէ անգլիերէն, ուսումն 'ի բերան եւ բացատրութիւն հատընտիր քերթուածոց :

Ֆրանսերէն . — (մասնաւորաց համար :)

Կրօնք . — Համ . Կրօնագիտութիւն, եւ Պատմ . Հայաստ . Եկեղեցւոյ . (աւարտած :)

Պատմոչրիշն . — Ազգային , " "

Արևել . Հին ազգաց եւ Յունաց , " (նոր սկսած :)

Թոշարանոչրիշն . — Տեսական եւ գործնական ընդարձակ , (աւարտած :)

Աշխարհագրոչրիշն . — Բնական, Քաղաքական եւ Ուսումնական , (աւարտած :)

Տարերք Երկրաչափոչրեան . — (Մինչեւ Զուգահեռականները :)

Տարերք Բնարանոչրեան . — (Մինչեւ Կաղային մարմինները :)

Տումարակաչրոչրիշն . — (Նոր սկսած :)

Բարոյագիտոչրիշն . —

Գեղագրոչրիշն . —

Գծագրոչքիւն . —

Մարմնաւարդ . —

Այս ուսմանց շատերուն մասնաւոր քննութիւնները կատարուեցան Փետրուարի վերջին շաբթուան մէջ, և զոհացուցիչ արդիւնք ունեցան :

Թուրքերէնի քննութիւնը կատարուեցաւ քաղաքիս մահմետական հասարակութեան նշանաւոր անձնաւորութեանց ուսմանց և թրքաց բարձրագոյն վարժարանի Տնօրէնին ներկայութեամբ, իսկ անգլիերէնի քննութիւնը՝ կղզւոյս կրթական Տեսուչ Արժ. Ֆրանք Նիւհամի — հանգուցեալ կանոնիկոս Սրբնսրբի յաջորդին — ներկայութեամբ : Յիշեալ օտարազգի հրաւիրեալները իրենց կողմէն ալ հարցումներ ուղղեցին աշակերտաց և մեծ զոհունակութիւն յայտնեցին տրուած յաջողակ պատասխաններուն համար :

Հարկ կ'զգանք այս առթիւ յիշելու որ վերջացող տարւոյս մէջ անգլիերէնի ուսուցման նոր զարկ մը տալու փափագով՝ յաջողեցանք ունենալու նոյն իսկ անգլիացի սւսուցիչ մը՝ նպատակայարմար պայմաններով :

Քննութեանց և դասուց մէջ իւրաքանչիւր աշակերտի ստացած նիշերուն միջին թիւը, նոյնպէս վարուց և արհեստական վարժութեանց աստիճանները՝ կը տեսնուին Տեղեկագրոյս կցորդեալ ցուցակին մէջ :

Դասաւանդութիւններէն զատ՝ իմացական և բարոյական դաստիարակութեան նպատած է նաև՝ ուսանողաց կիրակնօրեայ լսարանը, յորում հրահանգիչ ընթերցումներ կը լինին և օգտակար հատուածներ կ'արտասանուին :

Տարւոյս ընթացքին մէջ Որբանոցէս մեկնեցան ութը աշակերտներ, վեցը ընթացաւարտ : Այս վերջիններու մին

տեղացի երթևեկ աշակերտներէն լինելով՝ կառավարական պաշտօնատան մը մէջ գրագորութեան ընդունուած է առ այժմ :

Պակասողներուն տեղ՝ այս տարի ցարդ ունեցած ենք միայն հինգ նորեկ աշակերտներ, շորսը ձրիավարժ եւ մին թոշակաւոր :

Վերոյիշեալ մեկնողներէն զատ՝ կան երեք աշակերտներ եւ որոնք կարգապահութեան դէմ յանցաւոր դատուեցան եւ արտաքսուեցան : Արդարեւ, մեզի վիշտ պատճառեց այդպիսիներու գոյութիւնը Որբանոցիս մէջ, յորում տիրող սովորական կարգապահութիւնն ու բարեկրթութիւնը՝ մինչ իսկ օտարաց ուշադրութեան առարկայ դարձած է, սակայն այս անհաճոյ օրինակներուն դէմ ուրախառիթ փոխարինութիւն կ'ընծայեն մեր սաներուն մեծամասնութեան վրայ փայլող շնորհալի վարմունքն, բարի նկարագիրն եւ երախտազիտական ոգին : Փափագելի էր որ այսպիսի բարեգործական յարկերու ներքեւ պատասպարեալ պատանիներու հեռաւոր կամ մերձաւոր ազգականները եւ ուրիշ պաշտպանները աւելի զգուշաւոր լինէին իրենց թղթակցութեանց եւ թելադրութեանց մէջ, եւ ամեն բանէ առաջ՝ ջանային պարտաճանաչութեան զգացումը զօրացնել անոնց մատաղ սրտերուն մէջ :

Մեր ուսանողաց վրայ օգտակար ներգործութեան տեսակէտով՝ վերջացող տարեշրջանի մէջ նշանակելի դէպքեր եղան, նախ՝ Մխիթարեան երկհարիւրամեակի Յոբելեանին առթիւ հանդէս մը, Սեպտ. 8 ին կատարուած 'ի Ս. Մակար. յետոյ՝ թատերական ներկայացում մը, Ծննդեան տօնին առթիւ տեղի ունեցած :

Մարմնական առողջութեան մասին եւ կրնանք կատարեալ գոհունակութիւն յայտնել այս տեղ : Մտահոգու-

Թիւն սլատճառող ոչ մէկ հիւանդութիւն չը պատահեցաւ
ամբողջ տարուան միջոցին, և գրեթէ բոլոր ուսանողները
Ֆիզիքական զարգացման ակներև նշաններով ուշադրաւ և
զած են : Նախընթաց տարիներուն պէս՝ վերջին ամառուան
միջոցին ալ, օդափոխութեան համար երկու ամիսէ աւելի
մնացին Ս. Մակարու վանուց մէջ : Պարտաւոր կ'զգամք
զմեզ շնորհակալութեամբ յիշելու Մեծ. Տօքթ. Պ. Թահմիս-
եանը, որ երկու տարիէ ի վեր Որբանոցիս այցելու բժշկի
պաշտօնը կը վարէ դոյզն վարձատրութեամբ մը, և յաճախ
կ'այցելէ աշակերտները, 'ի հարկին հրահանգներ կամ դար-
մաններ տալով :

ԱՐ Հ Ե Ս Տ Ա Կ Ա Ն Ճ Ի Ի Ղ

Դերձակութեան և կօշկակարութեան վարժութիւնները
յատուկ վարպետներու առաջնորդութեամբ կանոնաւոր կեր-
պով շարունակուեցան այս տարեշրջանի միջոցին, և աշա-
կերտաց համար պէտք եղած զգեստները եւ մուճակները
Որբանոցիս մէջ սլատրաստուեցան :

Հացագործութեան աշխատութիւնները տարւոյս մեծ
մասին մէջ զազրեցնելու հարկադրուեցանք, որովհետև ցո-
րենի, ինչպէս երբեմն ալ վառելափայտի, դները բարձրա-
ցած լինելով կարելի չէր որ շուկայի հացագործներու վա-
ճառածէն զգալապէս աւելի աժան գնով հաց սլատրաստու-
էր Որբանոցիս մէջ, և հետեւաբար այդ մասին տրուելիք
ժամանակն և աշխատութիւնք՝ նիւթապէս կարևոր շահ մը
չպիտի թողէին :

Տ Պ Ա Ր Ա Ն

Վերջերս Որբանոցիս մէջ հաստատուած փոքրիկ տպարանը, կը յուսանք թէ նիւթապէս և բարոյապէս միանդամայն օգտակար լինի հաստատութեանս, նաև արհեստի նոր ճիւղ մը՝ մեր ուսանողաց ումանց համար :

Սրտագին երախտագիտութիւն կը պարտինք Վենետիկի Միսիթարեան տպարանի Պատուարժան Տեսչութեան, որ ինչպէս ուրիշ զանազան պարագաներու մէջ, նոյնպէս և տրպարանիս վերաբերող գործերու — տառերուն և մամուլին և այլ գործիքներու ընտրութեան և առաքման — մասին ամեն ձեռնտուութիւն և դիւրութիւն ընծայեց : Այս մասին շնորհակալութիւն կը պարտիմք նաև քաղաքիս կառավարական տպարանի պաշտօնեաներէն Տիար Մինաս Գրիգորեանին, որ իր հանգստի ժամերէն զոհելով՝ գործնական և բերանացի հրահանգներովը գործօն վիճակի դրաւ տպարանը, եւ կը շարունակէ պէտք եղած աջակցութիւնը նուիրելու :

Գ Ր Ք Ե Ր Ո Ի Վ Ա Ճ Ա Ռ Ռ Ի Մ

Յօգուտ Որբանոցիս վաճառուելու նպատակաւ բարեսէր հեղինակաց և այլ անձանց կողմէ նուիրուած գրքերը հետզհետէ սպառելու և անոնցմէ հասոյթ մը գոյացնելու համար որոշած էինք գրենական վիճակահանութիւններ կատարելու : Ըստ այնմ, անցեալ տարւոյ մէջ պատրաստեցինք մաս մը գրքեր, և անոնց փոխարէն 300 օրինակ մէյ մէկ շիւիննոց տոմսակներ : Չերմ շնորհակալութեան արժանի է որ մեր Եզիպտաբնակ սիրելի ազգակիցները, որք 'ի սկզբանէ անտի միշտ համակիր և աջակից կը գտնուին հաստատութեանս՝ պատրաստուած տոմսակները գրեթէ ամբողջովին վնեցին :

Այս վիճակահանութեան առթիւ տեսակներու զանազանութեան և գներու պատշաճ համեմատութեան համար գնուած մէկ քանի գրքերու արժէքը և փոխադրութեան ծախքը զեղջելով ունեցանք 18 ոսկւոյ զուտ հասոյթ մը : Չենք կրնար անյիշատակ թողուլ այն սիրայօժար ջանքերը զորս այս պարագայի մէջ ալ նուիրեցին՝ հաստատութեանս անձնուէր բարեկամներէն Տեարք Տօքթ. Նազարէթ Քէչէճեան և Յարութիւն Ճէպէճեան, 'ի Գահիրէ, աջակից ունենալով զՏիար Լևոն Միրիճանեան :

Ծ Ա Խ Ո Ի Յ Հ Ա Շ Ի Ի Ն Ե Ր

Որբանոցիս Հինգերորդ տարեշրջանի ծախքերը մանրամասնօրէն նշանակուած կը տեսնուին հետևեալ Հաշուեցոյցի մէջ : Այդ ծախուց համագումարն է 341 Անգլ. ոսկի, 18 շիւլին և 10 բէնի, որմէ զեղջելով 20 ոսկի, յաջորդ տարուան համար մնացած պաշարի և արհեստական նիւթերու արժէքը՝ կը մնայ իբր 322 ոսկի, որ է Խորհրդոյս ձեռքով կատարուած ծախուց գումարը : Ուտեստի ծախքերն աւելի պակաս պիտի լինէին եթէ տարւոյս երաշտութեան պատճառաւ ուտելեաց գները զգալի կերպով բարձրացած չը լինէին :

Մնամք խորին յարգանօք :

Անդամք Տևօրէն Խորհրդոյ

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱՃԵԱՆ

Նախագահ :

Ա. ԿԻԻՎԷՉԵԱՆ
Գանձապահ :

Ա. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Ատենապետ :

Ա. ՄԵԼԻԻԲԵԱՆ

Վ. ՔԻԻՐԻՃԵԱՆ

ՆԻԿՈՍԻԱ (Կիպրոս), 28 Փետրուար 1902 :



251-2013

Հ Ա Շ ՈՒ Ե Ց Ո Յ Ց Ծ Ա Խ ՈՒ Ց Ե . Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն Ի

(1901 Մարտ 1 — 1902 Փետրուար 28)

	Ա.Ո.	Շ.Խ.	Բ.Ե.Խ.Ի	Ա.Ո.	Շ.Խ.	Բ.Ե.Խ.Ի
ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՉՔ						
Աթա Պէյի տան տարեկան				24	-	-
ԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅՔ						
Գրքեր, գրի և գծագրութեան պէտքեր				6	11	11
ՈՒՏԵՍՏԻ ԾԱԽՔ						
Միջին հաշուով 30 աշակերտի համար				153	9	2
ՋԱՆԱՋԱՆՔ						
Օճառ	6	15	1			
Լուացք և բաղնիք	3	5	7			
Բժիշկ և դեղորայք	3	-	-			
Թղթակցութիւնք և հեռագիրք	4	12	-			
Լուսաւորութեան քարիւղ	5	7	6			
Փայտ և ածուխ	8	19	6			
Վանք երթևեկութեան համար	4	2	0			
Կահարասիք ննջարանի, սեղանատան եւն	6	7	2			
Նորոգութիւնք խոհանոցի, սենեկաց և այլնց	2	4	-			
Նորոգութիւնք դասական պիտոյից և գրոց	1	-	-			
Փոխադրութիւն որբ աշակերտաց	1	2	-			
Նոր գլխարկներ և գուլպաներ	1	5	10			
Այլեւայլք (ծառայութիւնք, շաղացքի վարձք, վարսավիրայ, ներկ, կլայեկ, լուցկի, աւել, մոխիր, շիշ, ճրագ եւն)	8	14	8	56	16	2
ԱՐՋԵՍՏԱՆՈՅ						
ԴԵՐՋԱԿՈՒԹԻԻՆ						
Վարպետի վարձք	5	9	5			
Նոր մեքենայ կարի	8	-	-			
Հանդերձեղէնի կերպասներ 27 — 4						
	40	9	9			
ԿՕՇԿԱԿԱՐՈՒԹԻԻՆ						
Վարպետի վարձք	4	10	-			
Կաշեղէնք, արհեստի պիտոյք 15 11 10						
	20	1	10	60	11	7
ՊԱՇՏՕՆԷԻՑ ԹՈՇԱԿՆԵՐ				40	10	-
				341	18	10

28 Փետրուար 1902, Նիկոսիա (Կիպրոս) :

Վասն ճշգրութեան ստորագրեալ :

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱՃԵԱՆ

Վ. ԳԻՒՐԳՃԵԱՆ Ա. ԿԻՒՎԷՋԵԱՆ Ա. ՄԷԼԻՔԵԱՆ Ա. ԻԻԹԻՒՃԵԱՆ

Ո Ւ Ս Ա Ն Ո Ղ Ք

	ՀԱՅՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ	Միջին թիւ նիշերու		
			Քաղաք	Ստան	Սրահատ
ՇՐՋԱՆԱՒԱՐՏ ԿԱՐԳԷՆ					
Մովսէս Սուլթանեան	Նիկոսիա	Երթևեկ			
Յակոբ Շամլեան	Խսկէնաէրուն	Թոշակաւոր			
Սեդրաք Աճէմեան	Տիարպէքիւր	Չրիաւարժ			
Սարգիս Պետրոսեան	Հասանպէյլի	"			
Գասար Կարապետեան	Պաղչէ	"			
Դ. ԴԱՍԱՐԱՆ					
Արմենակ Աթանասեան	Ատանա	Չրիաւարժ	84	88	85
Արմենակ Գրիգորեան	Հալէպ	"	89	91	86
Յովհաննէս Պէրպէրեան	Քիւլիս	"	97	88	90
Պօղոս Ալեքսանեան	Մարաշ	"	96	97	87
Ռափայէլ Փիլիպպոսեան	Սօղուլուզ	"	96	90	86
Սիմոն Վանեան	Ակն	"	85	97	80
Տիգրան Թօփալեան	Կիւրին	"	98	92	90
Գ. ԴԱՍԱՐԱՆ					
Խորէն Նազարէթեան	Այնթապ	Թոշակաւոր	88	85	85
Ղևոնդ Աճէմեան	Պիլէճիք	"	85	92	70
Մարտիրոս Պալթաեան	Արաբկիւր	Չրիաւարժ	90	91	80

	ՀԱՅՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ	Միջին թիւ նիշերու		
			Վարք	Սուսմ	Արհեստ
Մկրտիչ Գարագաշեան . . .	Սիվրիհիսար	Երթևեկ	84	87	90
Տիրան Յովհաննէսեան . . .	Երզնկա	Չբիաւարժ	86	86	80
Բ. ԴԱՍԱՐԱՆ					
Աւետիս Աղաճանեան . . .	Արաբկիր	Չբիաւարժ	94	80	80
Միսաք Անսուրլեան . . .	Մալաթիա	"	85	78	60
Նազարէթ Տ. Մկրտիչեան	Կեսարիա	Թոշակաւոր	94	85	—
Սարգիս Մելիքեան . . .	Արաբկիր	"	87	82	80
Սմբատ Աճէմեան . . .	Տիարպէքեր	Չբիաւարժ	86	83	75
Տիգրան Սուլթանեան . . .	Նիկոսիա	Երթևեկ	94	85	85
Ա. ԴԱՍԱՐԱՆ					
Աբրահամ Չաղլասեան . . .	Քիւլիս	Չբիաւարժ	83	93	75
Արամ Շալճեան . . .	Տիարպէքեր	"	86	93	75
Գառնիկ Գէորգեան . . .	Գահիրէ	"	85	79	75
Գեղամ Ճիզմէճեան . . .	Երզնկա	"	87	78	75
Միհրան Ստեփանեան . . .	Տիարպէքեր	Երթևեկ	79	75	73
Վահան Միրանշահեան . . .	Արաբկիր	Թոշակաւոր	86	89	80
Վահան Պօղոսեան . . .	Տիարպէքեր	"	90	74	80
ԸՆՏԵԼԱՐԱՆ					
Գալուստ Մարաշեան . . .	Վանա	Չբիաւարժ	84	80	—
Կարապետ Գըլըճեան . . .	Նիկոսիա	Երթևեկ	83	77	—
Միհրան Տ. Սարգիսեան . . .	Տիարպէքեր	Չբիաւարժ	81	80	80
Յակոբ Գըլըճեան . . .	"	"	87	73	—
Յակոբ Մարաշեան . . .	Վանա	"	81	85	—
Սեդրաք Ժամկոչեան . . .	Արաբկիր	Թոշակաւոր	81	77	—

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՁԵՌՔՈՎ
ՍՏԱՑՈՒԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ԵՊԱՍՏՆԵՐ

ԲԱՐԻՉԷՆ

Անգլ. Ոսկի Շեւ Բենի

Մեծաշուք Իշխան Լուսինեանի շնորհիւ,
Գերման մարդասէր M. Bolhe ի նուէրը ,

300 ֆրանգ	11	17	1
---------------------	----	----	---

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑ. ԵՍ. ՀԱՆԳՆԵՐԷՆ

Գեր. Յովսէփ Եպիսկ. Սարաճեանի շնորհիւ,
Միլֆրրոսի հայ գաղութէն,

	10	3	10
--	----	---	----

Ատիշցի Տիար Խաչիկ Թորոսեանի պատ-
կազրութեան առթիւ գոյացած,

	2	11	—
--	---	----	---

Նիւ Պրիթէյնէն Տիար Վարդան Յ. Խանիկ-
եանի շնորհիւ,

	4	15	—
--	---	----	---

ԳԱՀԻՐԷԷՆ

Վսեմ. Տիգրան Փաշա Ապրոյէ, (S. E.
Tigrane Pacha d'Abro)

	10	—	—
--	----	---	---

Ազն. Պետրոս էֆ. Կարապետեանէն իր ե-
րեք սաներուն տարեկանը

	30	—	—
--	----	---	---

Աղքատաց Պատ. Հոգաբարձութենէն,
մասնաւոր պաշտպանեալի մը համար

	6	—	—
--	---	---	---

Տիար Օհան Թովմալայեանէ (Չակազիկ) .

	1	—	—
--	---	---	---

Անգլ. Ոսկի

	76	6	11
--	----	---	----

Անդլ. Ոսկի Շիւ. Բէնի
Փոխադրի . . . 76 6 11

ԳԱԽՐԷԺԷՆ

Միսիթար Աբբահօր յիշատակին Որբանոցիս մէջ սան մը պահելու նպատակով կատարուած հետեւեալ հանգանակութեան գումարը, Վսեմ. Խաչիկ Խան Սարաճեանի շնորհիւ ստացուած ֆրան

Տիար Բաղդասար Աւագեան	100
" Սարգիս Գասպարեան	100
" Համբարձում Հայրապետեան	100
" Մատթէոս Յովսէփեան	100
" Զարեհ Խ. Սարաճեան	200
" Հայկազուն Կոստիկեան	50
" Տ. Վարժապետեան	100
" Պ. Ասլանեան	10
" Նազար Գորոյեան	14
" Գ. Չիլինկիրեան	10
" Ոմն	5

ֆրան 789

Որ է Անդլ. Ոսկի 15 — —

ՎԵՆԵՏԻԿԷՆ

Պատ. Խմբագրութիւն Բազմապէս հանդիսի, յօգուտ որբոց հրատարակած թերթի հասոյթէն 400 ֆր., որ է

15 16 6

Անդլ. Ոսկի . . . 107 3 5

Մ.ՆՊԼ. ՈՍԿԻ ՇԵԼ. Բ.ԷՆԻ
 Փոխադրի . . . 107 3 3

ԴԱՄԱՍԿՈՍԷՆ

Արժ. Աթանաս վարդապետ Աղանեանէ . . . 2 7 3

ՄԱՆՁԵՍԹՐԷՆ

Արժ. Տ. Թորոս Բազանայ Խաչակեանէ . . . 1 8 —

ՆԻԿՈՍԻՍԷՆ

Դ. Տեղեկագրի մէջ յիշուած նուիրատուութիւնք, կարի մեքենայի համար . . . 6 10 —

Տիար վարդան Յ. Խանիկեանէ (Նիւ Պրիթէյն, Ամերիկա) երկրորդ անգամ նըստատ, նոյն նպատակի համար . . . 1 — —

Տիար Ռմն, 'ի Նիկոսիա 10 —

Համագումար Մ.ՆՊԼ. ՈՍԿԻ . . . 118 18 10

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ՓԱՐԻԶ

ՇՆՈՐՀԻՒ ՊԱՏ. ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՈՅՆ ՓԱՐԻԶՈՒ

Արժ. վաճառատուէր քննյ. Բիպարեան 20.—

Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութիւն . . . 500.—

Տիկին Ե. Յակոբեան — Թագուր Փաշա 250.—

" Լևոն պէյ Բաբամանեան 100.—

" Տ. Էգնաեան 30.—

Ֆրանք . . . 900.—

	Փոխադրի . .	Ֆրանք
		900.—
Տիար Ա. Էղնաեան		200.—
” Խ. Ներսէսեան		100.—
Տեարք Թընկըր Եղբարք		100.—
Տիար Յ. Խսքէնատէր		100.—
” Ս. Սըլաճեան		100.—
” Յ. Ասլանկիւլ		100.—
” Կ. Բէհլիլեան		100.—
Տեարք Զօրայեան Եղբարք		50.—
” Սամուէլեան Եղբարք		50.—
Տիար Ն. Մանուկեան		50.—
” Ա. Սեթեան		50.—
” Տիգրան Խան Քէլէկեան		50.—
” Տօքթ. Սըքըեան		50.—
” Թ. Քարակէօզեան		50.—
” Ա. Միքայէլեան		50.—
” Ռ. Մարկոսեան		50.—
” Տ. Քէմհաճեան		50.—
” Մ. Սըլաճեան		30.—
” Ս. Աշճեան		20.—
” Ա. Միրան		20.—
” Մ. Սարըեան		20.—
” Մ. Գալբաքճեան		20.—
” Մ. Մինասեան		20.—
” Տօքթ Մ. Քէմհաճեան		20.—
” Մ. Յովակիմեան		20.—

Ֆրանք . . 2370.—

		Ֆրանք
	ֆոխադրի . . .	2370.—
Տիար	Խչ. Հիւնքեարալէյէնտեան	20.—
"	Ա. Ճէվահիրճեան	20.—
"	Անթուան Պրիմօ	20.—
"	Մ. Ալիքսանեան	10.—
"	Հր. Օտեան	10.—
"	Եր. Կիւմիւշկերտան	10.—
"	Ս. Էսմէրեան	10.—
"	Պ. Չիպուքճեան	10.—
"	Ա. Քաֆաֆեան	10.—
"	Գանձապահէ իբր տոկոս	21.30
		<hr/>
	Ֆրանք . . .	2511.30
	Այլեայլ ծախք	6.30
		<hr/>
	Զուտ Ֆրանք . .	2505.—

Որոյ ֆոխարէն խնամակալութեանս յանձնուած է Անգլ. Ոսկի 99, Շիւ. 11, Բենի 11 :

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ԼՈՆՏՈՆ

		Անգլ. Ոսկի	Շիւ.
Տեարք	Գ. և Կ. Կիւլպէնկեան և Ընկ.	5	—
Տիար	Ն. Ներսէսեան	5	—
"	Յ. Չիզիանեանց	3	—
"	Մ. Ներսէսեան	3	—
"	Ա. Կիւլպէնկեան	3	—
		<hr/>	
	Անգլ. Ոսկի . . .	19	—

		Անդր	Ոսկի	Շեւ
	Փոխադրի . . .	19		—
Տիար	Ե. Չիզմէճեան	2		—
—	Ռ. Սելեան	2		—
—	Տ. Արսլանեան	1		—
—	Յ. Սօրկուճ	1		—
—	Յ. Կիւլպէնկեան	1		—
Հանդանակեալ ձեռամբ Տիար Ռ. Սելեանի		2		—
		<hr/>		
		Անդր	Ոսկի	Շեւ
		28		—

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ՄԱՆՁԵՍԹԸՐ

		Անդր	Ոսկի	Շեւ
Տիար	Մարտիկ Յովհաննէսեանի ձեռամբ	40		—
Տեարք	Թօբալեան Եղբարք	20		—
Տիար	Գ. Ֆընտրքլեան	10		—
—	Տ. Մուրատեան	5		—
—	Մարանեան	5		—
—	Պ. Գրիգորիսեան և Ընկ	5		—
—	Ս. Եալարղճեան	5		—
—	Մարտիկ Յակոբեան	5		—
—	Սարգիս Մանուկեան և Որդիք	5		—
—	Քնածեան Որդիք	5		—
—	Մ. Մանուկեան	5		—
—	Յովհ. Անդրէասեան	5		—
—	Կ. Յ. Պասմաճեան	5		—
—	Ա. Քարակէօզեան	5		—
—	Ստեփան Իրլիքճեան	5		—
		<hr/>		
		Անդր	Ոսկի	Շեւ
		130		—

	Փոխադրի . . .	ԱՆՊԼ . ՈՍԿԻ . ՇԵՒ .	
	130	—	
Տիար Ֆրէնկեան	5	—	
" Ս. Եղիազարեան	5	—	
" Թ. Գ. Արասեան Եղբարք	5	—	
" Մ. Թօքատեան	5	—	
" Մ. Ազնաւորեան	4	—	
" Սիւզմէեան	4	—	
" Սարգիս Քույումճեան	4	—	
" Ալեանաքեան, անցեալ և այս տարուան Համար	6	—	
" Գ. Էսայեան	3	—	
" Աստարճեան Եղբարք	3	—	
" Կրօնիկ Բաբազեան	3	—	
" Պարոնեան	3	—	
" Գ. Մուրատեան և Որդիք	3	—	
" Մինաս Պասլաեան	2	10	
" Քամազերեան	2	—	
" Չաքրրեան	2	—	
" Ս. Թաւաքճեան	2	—	
" Ա. Գ. Տամատեան	2	—	
" Թօհաֆճեան	2	—	
" Յակոբեան և Որդիք	2	—	
" Յ. Բաբազեան և Որդիք	2	—	
" Մինչրան Մուրատեան	2	—	
" Նահապետեան	2	—	
" Քույումճեան Եղբարք	2	—	
	ԱՆՊԼ . ՈՍԿԻ	205	10

	Անդր. Ոսկի Շեւ.
Փոխադրի	205 10
Տիար Է. Չըպուքճեան	1 —
" Արշաւիր Եղբարբ	1 —
" Տ. Ալեմէրճեան	1 —
" Տասուրեան	1 —
" Չենորեան	— 5
Անդր. Ոսկի	209 15

ԱՅԼԵՒԱՅԼ ՆՈՒԷՐՆԵՐ

ԱՄԵՆ. ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ,
Ի ՉՄԻՒՌՆԻԱ.

Տարեկան « Հանդադիտակ » լրագիր:

ԱՐԺ. ԲԱԲԿԷՆ ՎԱՐԳ. ԿԻՒՎԷՍԷՐԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՍ.

« Ժողովուրդին Տօնացոյցը », 9 օրինակ:

ՏԻԿԻՆ ԿԱԼԻՆԻԿ Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՍ. և

ՏԻԿԻՆ ԱՐԱՔՄԻ Ս. ԱՇՃԵԱՆ, Ի ԲԱՐԻՉ.

« Ժողովուրդին Տօնացոյցը », տասնական օրինակ. 'ի
յիշատակ իրենց վաղամեռիկ բրոջ, Օր. Վիքթորիա
Կ. Գափամաճեանի:

ՊԱՏ. ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ, Ի ՎԵՆԵՏԻԿ.

2 օր. « Մխիթար », տարեկան « Բազմավէտ » և « Գեղու-
նի », նոյնպէս՝ 20 կառուրի չափ գրքեր և գրքոյկներ:

ՄԵՄ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ, Ի ՄԱՆՉԵՍԹԵՐ.

Տարեկան « Բանասէր » հանդէս:

ՄԵԾ. ՍԱՐԳԻՍ ԵՂԻՍՉԱՐԵԱՆ, Ի ՄԱՆՉԵՍԹՐՐ.

Տարեկան « Հանդէս Ամսօրեայ » :

ՄԵԾ. ՅՈՎԱԷՓ ԻՍԿԷՆՏԷՐ, Ի ԲԱՐԻՉ.

Տարեկան 2 օր. « Անահիտ » հանդէս :

ՊԱՏ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻԻՆ « ԲԻԻՐԱԿՆ » ՀԱՆԴԻՍԻ.

Տարեկան « Բիւրակն » :

ՄԵԾ. Յ. ՊՕՆՃՈՒԳԵԱՆ, Ի ՎԱՌՆԱ.

Նոր Ընթերցարան 3 մաս :

ՄԵԾ. Կ. ՄԻՀԱՆՕՓ, Ի ԳԱՀԻՐԷ.

Երկու օր. « Ազգ. Մահամաղբուծիւն » ,

Արտատպեալ 'ի Գահիրէ :

ՄԵԾ. ՀԱՅԿ ՆԱԼՃԵԱՆ, Ի ԳԱՀԻՐԷ.

1 օր. « Վերջալոյսի Չայներ » , Խրիսեան Հայրիկի.

3 օր. դասագրքեր :

ՄԵԾ. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ, Ի ՔԷՄՊՐԻՃ, ԱՄԵՐԻԿԱ.

Տարեկան « Լոյս » հանդէս :

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՆՆԻԿ ՏԱՎՈՒՏԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՍ.

Տարեկան « Բիւզանդիոն » լրագիր :

ԱՐԺ. ՊԵՏՐՈՍ ՎԱՐԳ. ՍԱՐԱՃԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Չատկի առթիւ մէկ ոչխար :

Դարձեալ, վանքն այցելելու առթիւ մէկ ոչխար :

ՏԻԿԻՆ Ա. ԻԹԻԻՃԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Չատկի առթիւ մէկ ոչխար :

Կաղանդի առթիւ մրգեղէն և անուշեղէն :

ՄԵԾ. ԱՐԹԻՆ ՄԵԼԻՔԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Մէկ կողով հաւկիթ : Մէկ կողով լիմոն : Մէկ կողով

ծիրան : Մէկ պարկ բակլայ :

ՆՈՅՆ .

Աշակերտները հրաւիրեց իր տան պարաւելը՝ ծիրան վա-
յելելու :

Հօրը մահուան տարեդարձին՝ հացկերոյթ մը տուաւ Որ-
բանոցիս մէջ :

ՄԵԾ . ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃԵՐՄԱԿԵԱՆ , Ի ՆԻԿՈՍԻԱ .

Երեք պարկ ընտիր ալիւր :

ՄԵԾ . ՅԱԿՈՒ ԵՍԱՅԵԱՆ , Ի ՆԻԿՈՍԻԱ .

Մէկ ոչխար :

ՄԵԾ . Ա . ԿԻՒՎԷՉԵԱՆ , Ի ՆԻԿՈՍԻԱ .

Մէկ կողով ծիրան : Մէկ կողով թուզ :

ԱՐԺ . ՍԱՐԳԻՍ ՎԱՐԳ . ԱՃԷՄԵԱՆ , ՅԵՐՈՒՍԱՂԷՄ .

Մէկ ոչխար :

ՄԵԾ . ՅԱԿՈՒ ՅՈՎՍԷՓԵԱՆ , Ի ԼՍՐՆԱՔԱ .

Մէկ բեռ հաղար (մարու) :

ՄԵԾ . ԼՈՒԹՅԻԿ ԳՐՄԸՉԵԱՆ , Ի Ս . ՄԱԿԱՐ .

Մեղր և այլ ուտեստներ :

ՄԵԾ . ՍԱՐԳԻՍ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ , Ի ՆԻԿՈՍԻԱ .

Իր անուան տօնին առթիւ ճաշկերոյթ մը , և ուրիշ առ-
թիւ նուէրներ :

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԳԷՈՐԳԵԱՆ , Ի Ս . ՄԱԿԱՐ .

Հաւ մը :

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ Գ . ՍՈՒԼԹԱՆԵԱՆ , Ի ՆԻԿՈՍԻԱ .

Կաղանդի առթիւ շաքարեղէնք :

ՏԻԿԻՆ ՄԱՌԻ Մ . ՍՏԵՓԱՆԵԱՆ , Ի ՆԻԿՈՍԻԱ .

Մէկ ոչխար :

ՄԵԾ. ՍԱՐԳԻՍ ԴԱՐԲԻՆԵԱՆ, ՏՊԱԳՐԻՉ, Ի ԳԱՀԻՐԷ.

Գրքերու վիճակահանութեան տոմսերը տպագրեց ձրիապէս :

**BRITISH AND FOREIGN SCHOOL SOCIETY,
LONDON.**

*Անգլիերէն դասագրքեր, դպրոցական առարկաներ և մէկ
երգեհոն (Harmonium) . Համագումար արժէք 15
Անգլ. Ռսկի :*

RELIGIOUS TRACT SOCIETY, LONDON.

*Դասառութեան և ընթերցանութեան յատուկ 26 կտոր
գրքեր :*

**ՀԱԿԱԼԿՈՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ, Ի
ԴԱԻՐԷԺ.**

15 օր. « Մարդկութեան ամենամեծ թշնամին » .


10 օր. « Մի՛ խմիր » :

ՄԵԾ. ՊԵՏՐՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ.

Ճաշկերոյթ մը տուաւ Որբանոցիս մէջ :

**Պ. ԳԱՍՊԱՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, (Նախկին աշակերտ կրթա-
րան-Որբանոցիս) Ի ՆԻԿՈՍԻԱ.**

Մէկ ոչխար :



Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ս Մ Ա Ս Ի Ն

Nicosia, Cyprus. 23 February 1902.

I have much pleasure in repeating my testimony of last year to the excellence of the Armenian School and Orphanage carried on in this town. Mr. Kurkdjian, the Director, seems very kind and judicious in his management of the boys who are happy and well-behaved.

I had the pleasure of examining the upper class in English and found them well taught and intelligent.

F. D. NEWHAM,
Inspector of schools,
Government of Cyprus.

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն :

Մեծ հաճոյքով կը կրկնեմ իմ անցեալ տարուան միայն յուժիւնս քաղաքիս մէջ յառաջ տարուած Հայկական Գաղութիւն ու Արրանուցին սլատուակահանութեանը մասին : Տնօրէնը, Պ. Քիւրքճեան, շատ բարեսիրտ և շրջահայեաց կ'երևի կառավարելու մէջ տղաքը, որոնք երջանիկ ու բարեկիրթ են :

Հաճոյք ունեցայ Անգլիերէնի մէջ քննելու բարձրագոյն կարգի աշակերտները, զորս լաւ հրահանուած և ուշիմ գրատայ :

Ֆ. Տ. ՆԻԻՀԱՄ,
Կառավարական Քննիչ
Գաղութաց Կիպրոսի :

28 փետր. 1902.

Անցեալ տարուան միջոցին այցելութիւններ բրի Նիկո-
սիոյ Հայկական կրթարանին: Մի քանի գէպքեր դարձանե-
ցի, բայց որ և է ծանր հիւանդութիւն մը չը սխառահեցաւ:
Տղայք քաջասողջ են, ուսեստը լաւ և առողջարար դատձ եմ:
Տունը օդատուն է և առողջապահական կարդադրութիւնները
գոհացուցիչ են:

ՏՕԲԹ. Պ. Թ. Ս. Հ ՄԻՍԵԱՆ.

Անդամ Վիրաբուշտ. Արքունի Գոյեձիւն, և
Վիսյեազ Բժշկ. Արքունի Գոյեձիւն Լուստունի:



«Յօնի դէս Քիւրու» լրագրոյ 790 թիւ թերթէն թարգմանուած:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ո Ր Բ Ա Ն Ո Յ

Վերջին քննուչիշնները . — Հիւանայի արդիւշններ:

Անցեալ շաբաթ ներկայ դանուեցանք Նիկոսիոյ Հայ-
կական Ազգ. Որբանոցի քննութիւններուն: Ամեն տեղ
տեսանք կանսն և կարդապահութիւն: Աշակերտները կը
սորվին արհեստներ, բայց այս քանը ո՛ր և է արդելք չըլար
իրենց կրօնական և ազգային դարգացման: Տեսուչը մեզի շատ
լաւ ընդունելութիւն ընելով՝ ցուցուց մեզի հաստատութեան
զանազան մասերը, — դրսդարանը, սեղանատունը, սերտա-
րանը և դասարանները, որոնց ամենուն մէջ գտանք զովելի
մաքրութիւն: Մեր այցելութեան օրը բարձրագոյն կարգի ու-
սանողք կը քննուէին՝ նիւթ ունենալով Հին ազգաց — Յունաց
Հոսմայեցուց, Պարսից են, — պատմութիւնը: Ուսանողները
գոհացուցիչ կարողութիւն ցուցին, և իրենց սուսած պատաս-
խաններէն կը հասկցուէր թէ գասերը չոր կերտւով և թութակա-
բար չէին աշանդուած:

Արտասահմանի միջոց ունեցող հայերը հայրենասիրական պարտք ունին պաշտպանելու և զարգացնելու այս ազգօգուտ հաստատութիւնը, որ կը շինէ արհեստաւորներ, մարդեր և նըկարագիրներ :



Հայ հոգևորական մը որ շատ կարևոր պաշտօն մը կը վարէ Թուրքիոյ մէջ՝ հետևեալ տողերը կը գրէ Ռբբանոցիս Տեսչին: Նամակին առարկայ եղող տղան, իր մերձաւոր ազգականը լինելով՝ իբրև Թոշակաւոր երկու տարի հաստատութեանս աշակերտելէ յետոյ վերջերս վերադարձած էր :


. . . Առանց կեղծիքի և շափազանցութեան կուզամ ծանուցանել Ձեզ որ հոս մեծով ու սղտիկով հիանալի գտանք Ձեր տուած կրթութիւնը, և զովեստներով օրհնեցինք Ձեր հաստատութիւնը՝ մաղթելով որ տևական ըլլայ նա յօգուտ ազգային մանկտւոյն: Հին և նոր * * * ին մէջ գտնուած տարբերութիւնը շատ մեծ էր. հետևաբար շատ զոհ մնացի տղան Ձեր խնամոց յանձնած ըլլալու համար, և կը փափաքէի որ դեռ հոն մնացած ըլլար ժամանակ մ'ևս :

. . . Ձեր կարողութեամբ ու զոհողութեամբ ա՛լ աւելի մեծ ծառայութիւն պիտի կրնայիք ընել ազգին եթէ վարժարաննիդ արտասահման հաստատած չըլլայիք ու անոր ծրագիրը քիչ մ'աւելի ընդարձակած լինէիք: Այսու ամենայնիւ կրկին նախընտրելի է Ձեր կրթարանը ծանօթ շատ մը գիշերօթիկ վարժարաններէ :

Ուրեմն կը շնորհաւորեմ Ձեր յանձնողութիւնը և կարողութիւն կը մաղթեմ յարատևելու համար այդքան լաւ սկսուած գործ մը :

Մնամ Աղօթարար

.



ԿԱՂԱՆԴԻ ԱՅՅՆԼՈՒԹԻՒՆ

Նիկոսիա 1 Յունիւ. 1902:

Ինչպէս ուրիշ առիթներով այս անդամալ Նոր Տարւոյ առթիւ կրթարան-Որբանոց այցելելով շատ գոհ մնացինք տեսնելով որբերը որ կը նմանին իրենց ծնողաց ձեռացր մէջ ուրախութիւն ընող զաւակաց, շնորհիւ իրենց ժրաջան Տնօրէնին և իւր Համեստուհի Տիկնոջ, որոնք բնաւ յուսահատիչ չեն գիտեր ու կը գործեն միշտ, խնամելով մեր որբերը նրման իրենց զաւակաց: Մօտէն գիտակից ըլլալով պարտ կը համարիմք մեր լաւ տպաւորութիւնը արձանագրել աստ:

Բերոշգ Ճերմակեան: Յարոշքիչև Ճերմակեան:

ՈՒՂՂՈՒԱԾ

Հետևեալ նուիրատուաց անունները որոնք սխալմամբ տարբեր կերպերով նշանակուած են անցեալ տարուան (Դ.) Տեղեկագրին մէջ՝ կը կրկնենք այս տեղ, իրենց նուէրներով միասին:

Տիար Գ. Հեջուբեան ի Մարտէլ,	2	Մնգլ. Ռսկի.
Տիար Նշան Մալումեան ի Գահիրէ,	50	Եգիպտ. գրչ. ողջ.
Տեաքք Արիեան Եղբարք ի Գահիրէ,	97,5	" " "
Տիար Յակոբ Երամեան ի Նիկոսիա,		Գծագրութեան մը փոխարէն աշակերտի մը նուիրուած գրպանի ժամացոյց:

ՓԱՐԻՉՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

Տեղեկագրիս տպագրութեան աւարտումէն առաջ հետևեալ կերպով վերակազմուած է:

Նախագահ, Արժ. Տէր Վրամշապուհ Քահանայ Բիպարեան:

Ատենապետ, Մեծ. Տիար Կարապետ Բէհլիլանեան,

Գանձապահ, Մեծ. Տիար Իգնատիոս Զօրայեան,

Ատենադպիր, Մեծ. Տիար Պօղոս Չրպուքճեան:

Մեծ. Տիգրան Խան Քէլէկեան:

Մեծ. Տիար Արամ Սէթեան:

Նոյնպէս Լոնտոնի Օժանդակ Մասնաժողովոյ Գանձապահի և Քարտուղարի պաշտօնն ստանձնած է,

Մեծ. Տիար Յակոբ Յ. Կիւլպէնկեան:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Մ Ո Ւ Տ Ք

1 ՄԱՐՏ 1901 —

	Մեղ. Պահ.	Շիւ.	Բեւե.
Ըստ նախորդ հաշուեկշռոյն Տնօրէն Խորհրդոյ ձեռքը գտնուած կշիռը	14	19	1
Ըստ նախորդ հաշուեկշռոյն Գանձապահ Տխար Եղիազարեանի ձեռքը գտնուած կշիռը	103	13	6
Նուիրատուութիւնք Պատ. Տնօրէն Խորհրդոյն ձեռամբ	118	18	10
Հասոյթ Թաւերական ներկայացումէ	5	1	—
Գրքերու վիճակահանութենէ	18	—	—
Կօշիկներու և թեփի վաճառումէ	1	15	7
Թողակաւոր գիշերօթիկ և Երթևեկ աշակերտներէ	95	—	—
Նուիրատուութիւնք Փարիզու Պատ. Մասնաժողովոյ շնորհիւ	99	11	11
" Լոնտոնի " " "	28	—	—
" Ի Մանչեսթըր	209	15	—
Տոկոս Գանձապահ Տխար Եղիազարեանէ	19	1	7
	718	16	6
ՊԱՀԵՍՏԻ ՀԱՇԻԻ			
Ըստ նախորդ հաշուոյն փոխադրեալ գումարը	350	—	—
Ըստ Ընդհանուր Հաշուեկշռոյն, 1 Մարտ — 1902, Պահեստի փոխադրեալ գումարը	150	—	—
	500	—	—

ՀԻՆՓԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

28 ՓԵՏՐՈՒԱՐ 1902

Ե Լ Ք

	Անգլ. Ոսկի	ՇԷԼ.	ԲԷՆԻ
Նուէր Տնօրէն Տեսուչ Տիար Վ. Քիւրքէեանի	50	—	—
Կրթարան Որբանոցին միամեայ ծախքը ըստ Տնօրէն Խորհրդոյ հաշուոյն	341	18	10
Նախորդ Տեղեկագրոյ տպագրութեան ծախքը	7	19	—
Որբոց փոխադրութեան համար	4	—	—
Տպարանի հաշուոյն յատկացեալ դրամագլուխը	52	7	11
Մարտ 1-1902, Տնօրէն Խորհրդոյն ձեռքը գտնուած կշիռը	24	7	9
" " Գանձ. Տիար Եղիազարեանի ձեռքը գտնուած կշիռը	88	3	—
" " Պահեստի հաշուոյն փոխադրուած գումարը	150	—	—
<hr/>			
	718	16	6

Ի ՆՊԱՍՏ ՈՐԲԱՆՈՑԻՍ ՎԱՃԱՌԵԼԻ ԳՐԻՆԵՐ

ՆԻՆՆ

Ֆրանսահայ Նոր Բաղիբք Պատկերազարդ,
Գոշտոն Լոսիկեանի, Հատոր Առաջին 18

History of Armenia, By N. Ter Gregor.
(Պատկերազարդ Հայոց Պատմութիւն, անգլիերէն) 4

Լուսինեանք, Մելիք Ս. Գաւիթ-Բեկի: 2

Գնողներէն փոխադրութեան ծախք չը պահանջուիր:
Իբր փոխարժէք կընդունուին թղթատարական նամակա-
դրոշմներ:



